

33(390)
25.11.2014

Յրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարով

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՀԱՅ ՉԻՆՎՈՐԸ՝ ՄԵՆ ՄԻՇՏ ԱՊԱՎԵՆ

Աղբբեջանը հերթական ապաշնորհ փորձն է արել՝ ստուգելու Արցախի պաշտպանության բանակի մարտունակության աստիճանը: Անշուշտ, ոչ մի ռազմաքաղաքական անհրաժեշտություն չկար ուսումնավարժական թռիչք իրականացնող ՊԲ ուղղաթիռը խոցելու համար: ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդությամբ ընթացող բանակցությունները բնավ չեն սպառել եթե ոչ խաղաղության հասնելու, ապա, գոնե, հրադարարի ռեժիմը պահպանելու հնարավորությունները: Այս պայմաններում, և հատկապես օգոստոսյան հիշարժան դասից հետո, հարևան Աղբբեջանը պետք է որ ձեռնարկի մնար նոր սարդիչ գործողություններից, բայց մեր արկածախնդիր հարևանները կրկին ցույց տվեցին իրենց սև դեմքը:

Նոյեմբերի 12-ին արցախյան զինուժին պատկանող ՄԻ-24 ռազմական ուղղաթիռի խոցումը և հետադարձ խիված ուղղաթիռին մոտենալուն խոչընդոտելը միջազգային նորմերի կոպիտ խախտում էր: Պաշտոնական Բաբուն նույնիսկ մերժեց ԵԱՀԿ մշտադիտարկման խմբին՝ նկատել տալով, թե ինքն է թելադրում խաղի կանոնները, քանի որ դրության տերը տվյալ դեպքում ինքն է: Սա ոչ թե մոլորություն, այլ չարամիտ դիտավորություն է, ինչը նշանակում է, որ եթե վաղը հակամարտության գոտում տեղակայվեն խաղաղարար ուժեր, ապա Աղբբեջանը ցանկացած պահի կարող է միայն իրեն ձեռնադրել պայմաններ թելադրել, ընդհուպ մաս փորձ անելով իրենախնդիր ռազմական լուծում տալ իր օգտին: Ինչպես ասում են՝ սակայն խորամանկ աղվեսը երկու ոտքով թակարդն է ընկել: Հայկական կողմի մշտական պնդումները, թե դարաքայան զինուժին ունակ է ռազմական հավասարակշռություն ապահովել՝ սանձահարելով Աղբբեջանի նկրտումները, ևս մի հիմնավոր փաստարկ ստացան: Կարծում ենք՝ Մինսկի խմբի համանախագահները, և առհասարակ, դարաքայան հիմնախնդիր խաղող լուծմամբ շահագրգիռ միջազգային մյուս կառույցները վերստին համոզվեցին, որ Աղբբեջանը նեճ բանակցային կողմ է խաղաղարար նախաձեռնություններում, և որ ներկա փուլում ստատուս-քվոն այլընտրանք չունի:

Արցախի պաշտպանության բանակի հզորությամբ հպարտանալու բազմաթիվ առիթներ ավելի քան երկու տասնամյակում ունեցել ենք: ՊԲ հատուկընկառույցների փայլուն օպերացիան, որի արդյունքում խոցման վայրից դուրս են հանվել հայ օդաչուներից մեկի դին և մյուս երկուսի աշունները, պատմության դասագրքերում փառավոր նոր էջի նյութ կդառնա: Հիմա մեզ համար նույնիսկ կարևոր չեն այդ ռազմագործողության մանրամասները, թեպետ որոշ հայկական լրատվամիջոցներ, չգիտես ինչու, ավելորդ քանքեր են թափում՝ դրանց շուրջ սեփական մեկնաբանություններ անելու համար: Հայաստանի և փառաբանել պետք է, անշուշտ, սակայն ճիշտ չէ խորանալ ռազմական գաղտնիք հանդիսացող դրվագների մեջ: Բավարարվենք միայն նրանով, ինչ մատուցում է մեր պաշտպանական գերատեսչությունը, իսկ ԼՂՀ ՊԲ և ՀՀ ՊՆ պաշտոնական հարդորագրությունները միանգամայն բավարար են ձեռնարկված հատուկ միջոցառումների մասին թույլատրելի չափով իրազեկված լինելու համար:

Հերթական անգամ մենք համոզվեցինք, որ ի դեմս ԼՂՀ պաշտպանության բանակի՝ ունենք հուսալի պաշտպան, և որ ոչ մի խաղաղարար առաքելություն չի կարող մեր անվտանգությունն ապահովել: Այդպես եղել է Արցախյան պատերազմի ժամանակ, և դրանում կրկին համոզվում ենք այսօր՝ ստույգ իրավիճակում: Ուրեմն, ասենք՝ փառք հայ զինվորին ու բազմապատկենք մեր սերը հայրենիքի հանդեպ:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՈՒՄԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՕՐԵՐՆ ԱՐՑԱՒՈՒՄ

ՄԵԿԵԱՐԿԸ

Նոյեմբերի 17-21-ը Արցախում անցկացվեցին ավանդական դարձած Ռուսական խոսքի օրեր:

Մեկնարկը տրվեց մայրաքաղաքի Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 հիմնական դպրոցում: Ներկա էին ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուկասյանը, կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, արտգործնախարար Կարեն Միրզոյանը, այլ պաշտոնյաներ, ուսուցիչներ, աշակերտներ, հյուրեր: Միջոցառումը կրկին մի հարկի տակ էր հավաքել Արցախի, Հայաստանի և Ռուսաստանի կրթության և մշակույթի բնագավառների մի խումբ գործիչների՝ ռուսաց լեզվի ջատագովների, և նրանց, ում հոգեհարազատ է մեծ և հզոր ռուսաց լեզուն: Նրանց թվում են հայ ժողովրդի, մասնավորապես մեր լեռնաշխարհի հավատարիմ բարեկամներ՝ ճանաչված հրապարակախոս, սցենարիստ Կիմ Բակչին, ռուս գրող Վիկտոր Կոնոպլովը, ՀՀ ԿԳ նախարարության ներկայացուցիչներ:

Ռուսական խոսքի օրերի մեկնարկը շնոր-

վին: Այդ են վկայում ռուսաց լեզվի գծով անցկացվող տարաբնույթ մրցույթներն ու օլիմպիադաները, որտեղ հաջողությամբ հանդես են գալիս և մրցանակային տեղեր գրավում ԼՂՀ հանրակրթական դպրոցների սովորողները:

Ռուսական խոսքի օրերի շրջանակներում նույն օրը տեղի ունեցավ ասանկի մրցույթ՝ նվիրված ռուս մեծ գրող Մ. Յու. Լերմոնտովի ծննդյան 200-ամյակին: Նման մրցույթ, ըստ Ռ. Օսիպովի, անց է կացվում վեցերորդ անգամ: Ռ. Օսիպովը ներկայացրեց մրցույթի անցկացման ծրագիրն ու կարգը, ինչպես նաև նախապես ստեղծված մրցութային հանձնախմբի անդամներին (հանձնախմբի նախագահ՝ Մետրոպ Մաշտոց Համալսարանի ռեկտոր Դոնարա Գաբրիելյան):

Նշենք, որ հանձնախումբը հատկապես ուշադրություն էր դարձնում ճիշտ խոսքին, արտահայտիչ արտասանությանը և ստեղծագործության գեղարվեստորեն մատուցմանը:

Ընդհանուր առմամբ, ձևավորված էր 10 թիմ, որոնք ներկայացնում էին հանրապետության տարբեր շրջաններն ու ավագ դպրոցները: Առաջինը հանդես եկան հ. 3 դպրոցի աշակերտները:

Արդյունքում մրցանակային 1-ին տեղը համապատասխանաբար կիսեցին հ. 3 և հ. 11, 2-րդ՝ հ. 8 և Ֆիզմաթ դպրոցների 10-12-րդ դասարանների աշակերտները: Մյուս մասնակից թիմերը զբաղեցրին 3-րդ մրցանակային տեղը:

Օրվա երկրորդ կեսին Ռուսական խոսքի օրերի մասնակիցները ճանաչողական այցով մեկնեցին Շուշի, եղան Գ. Գաբրիելյանցի անվան կերպարվեստի և երկրաբանության թանգարանում:

ՈՒՄԱԿԱՆ ԽՈՍՔԻ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Միջոցառման շրջանակներում նոյեմբերի 18-ին Ստեփանակերտի հ.1 հիմնական դպրոցում տեղի ունեցավ մեթոդական կոնֆերանս հանրապետության ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչների մասնակցությամբ: Միջոցառման հիմնական նպատակը մանկավարժական փորձի տարածումն էր, ուսուցիչ հեղինակության բարձրացումը: Այն ուղեկցվեց մի քանի փուլով:

Բացման խոսքում հ. 1 հիմնական դպրոցի տնօրեն Ռոմելա Դադայանը ողջունեց Արցախում Ռուսական խոսքի օրերի անցկացումը: Նա հակիրճ անդրադարձավ կրթության ձեռքբերումներին՝ նշելով, որ դպրոցի շրջանավարտներից շատերն այսօր աշխատում են ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի տարբեր ծայրերում, որովհետև նրանք ի սկզբանե սիրել են ռուսերենը: 1989-ից առայսօր դպրոցը խորացված ռուսերենով դասեր է վարում: Ռ. Դադայանն իր կոլեկտիվի անունից երախտագիտություն հայտնեց ռուս մեծ բարեկամներ Կիմ Բակչին և Վիկտոր Կոնոպլովին՝ պարբերաբար Արցախ այցելելու, իրենց գործունեությամբ մեր երկրի ճանաչմանը նպաստելու համար:

«ԼՂՀ-ում մշտապես առանձնակի ուշադրություն է դարձվել հայ և ռուս ժողովուրդների միջև ստեղծված պատմական կապերին: Հայ ազգը պահպանել է ռուսական հարուստ մշակույթը, չի մոռացվել մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի պատգամը՝ ռուսաց լեզուն մենք պետք է վեր դաստնք բոլոր մյուս լեզուներից»,- այսպես սկսեց իր ելույթը ԼՂՀ ԿԳՆ պետական տեսուչ Ռուբեն Օսիպովը: Նրա խոսքով՝ հանրապետության ուսումնական հաստատություններում մեծ սիրով ու հետաքրքրությամբ են սովորում ռուսաց լեզուն. դա նկատելի է դպրոցներում անցկացվող տեսչական ստուգումների ժամանակ: Նախարարությունը մեծ ուշադրություն է դարձնում երիտասարդ ուսուցիչների պատրաստմանը:



ըր: Տեսչական ստուգումները վկայում են, որ ռուսաց լեզվի ուսուցիչները բարեխղճորեն են պատրաստվում դասերին, ձգտում դրանք դարձնել կենդանի և հետաքրքիր, ամբողջությամբ տիրապետում են դասավանդման մեթոդիկային, պահանջկոտ են ինչպես աշակերտների գիտելիքների, այնպես էլ իրենց նկատմամբ: Արդեն քանի տարի է՝ Ստեփանակերտի հ. 1, 7 և 2 դպրոցներում գործում են ռուսաց լեզվի խորացված ուսուցմամբ դասարաններ: Դա հնարավորություն է ընձեռում ուսուցիչներին՝ աշակերտներին սովորեցնել լավ և հստակ խոսել ռուսերեն, կարդալ, գրել ու հասկանալ ռուսաց լեզուն: Նշված դպրոցներում աշխատում են ռուսաց լեզվի փորձառու մանկավարժներ, որոնցից են ժամնա Բալայանը, Վերա Խաչատրյանը, Սիլվա Սարգսյանը, Լիանա Սիմոնյանը, ինչպես նաև՝ Ալլա Մկրտումյանը, Սուսաննա Միրզոյանը, Էմմա Բաբայանը, Նինա Բադուցը, Լիանա Կարապետյանը՝ Հաղորթից, Մարտունուց, Մարտակերտից ու Ասկերանից և շատ ուրիշներ:

Դպրոցի տնօրենի և նախարարության պետական տեսուչի ելույթներում ներկայացված՝ ռուսաց լեզվին տիրապետելու, դրա նկատմամբ մեծ հետաքրքրություն ցուցաբերելու վերաբերյալ հաստատեցին հ. 1 կրթօջախի սովորողները նախ՝ գրական-գեղարվեստական գեղեցիկ համադրությամբ, ապա՝ չորս դասարանների ժամանակ, որոնց ներկա էին միջոցառման մասնակիցներն ու հյուրերը: Ի դեպ, դասերից երկուսն անց է կացվել Հաղորթի դպրոցի երեխաների մասնակցությամբ:

Դասերից հետո, ծրագրի համաձայն, տեղի ունեցավ կլոր սեղան, որի ժամանակ շուրջ 2,5 ժամ եղան ակտիվ քննարկումներ՝ «Հայկական դպրոցում ռուսաց լեզվի դասավանդման հրատապ հիմնախնդիրները» թեմայով: Ներկաները կիսվեցին դասերից ստացած տպավորություններով, իրենց դիտողություններն ու առաջարկություններն արեցին՝ հետագայում դրանք էլ ավելի արդյունավետ դարձնելու համար:

«Այսօր մենք ակնատեսը դարձանք բարձր մակարդակով ու հրաշալի անցկացված չորս դասերի, որոնք վկայում են ուսուցիչների արհեստավարժության մասին: Նրանք կարողացան այնպես անել, որ երեխաները ցույց տան իրենց գիտելիքներն ու գրագիտությունը ռուսաց լեզվից: Խոսում էին հստակ ռուսերենով, կարողանում էին միանգամայն ազատ շարադրել իրենց մտքերը, ինչը գոհացրեց մեզ:

Ես երկար տարիներ եղել եմ այն հանձնախմբի նախագահը, որը քննարկում էր ընդունում այն տղաներից, ովքեր գնում էին Ռուսաստանի զինվորական հաստատություններում սովորելու: Եվ երբ պատահիներից որևէ մեկը խոսում էր մաքուր ռուսերենով, նրան իսկույն հարցնում էի՝ Դարաքաղից ես... Այսինքն՝ Դարաքաղում այնքան բարձր է ռուսաց լեզվի դասավանդման մակարդակը, և երեխաներն այնքան մաքուր ու գրագետ են խոսում, որ ոչ մի խնդիր չունեն արտահայտման և հնչեղանակի հետ կապված, շատ լավ հասկանում են իրենց արտաբերած բառերի իմաստը: Երախտապարտ ենք Արցախի իշխանություններին, բոլոր կազմակերպիչներին՝ Ռուսական խոսքի օրերի անցկացման համար, հ. 1 դպրոցի տնօրենությանը, որ ցույց տվեց իր հրաշալի աշակերտներին, նրանց հնարավորություններն ու արվեստը:

ՕՐԱԳԻՐ

ՌՈՒՍԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՕՐԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ԽԱՂԱՌԹՅԱՆ

1 Այս կարգի դպրոցում սովորելը պարզապես տոն է: Նաև տոն է նման ուսուցիչների հետ աշխատելը»-ասաց ԳՅ կրթության ազգային ինստիտուտի ռուսաց լեզվի մասնագետ Ժաննա Բաղդասարյանը:

«Ինձ թվաց, որ ես ներկա եմ եղել Ռուսաստանի դպրոցներից մեկում տեղի ունեցող դասապրոցներին: Ռուսաց լեզվից բոլոր դասերը, որ անցկացվեցին 5-րդ և 6-րդ դասարաններում, հրաշալի էին: Դասավանդող ուսուցիչները ցուցաբերեցին ստեղծագործական հետաքրքրություն՝ դասը մատուցելով տարբեր մեթոդների կիրառմամբ: Հստակ



Սոյեմբերի 20-ին մայրաքաղաքի հ. 5 դպրոցում տեղի ունեցավ «Արցախի երեխաները՝ հանուն խաղաղության» թեմայով նկարչական փառատոն Ստեփանակերտում գործող հիմնական դպրոցների սովորողների մասնակցությամբ:

Փառատոնի կազմակերպիչներն ու հյուրերը նախ ակամատես դարձան հ. 5 հիմնական դպրոցի ցածր դասարանների աշակերտների կողմից բակում կազմակերպված ֆլեշ-մոբին: Երեխաները գույնզ-գույն կավիճներով նկարում էին ասֆալտին և կրթօջախի աստիճաններին:

Հայկ Բալասանյանի անունը կրող կրթօջախի 14 շրջանավարտներ իրենց կյանքը նվիրել են Արցախի ազատությանն ու անկախությանը: Միջոցառման մասնակիցները հարգեցին նրանց հիշատակը և ծաղիկներ խոնարհեցին Փառքի սրահում տեղակայված հուշատախտակին:

Այնուհետև գեղեցիկ ու հարմարավետ դահլիճում կրթօջախի սաներն իրենց անկաշկանդ ռուսերենով երգ ու ասմունքով դիմավորեցին հյուրերին:

Նկարչական փառատոնը հանդիս էր Երեխայի միջազգային օրվան, որը նշվում է Սոյեմբերի 20-ին: Ստեփանակերտի հիմնական դպրոցների ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչների մեթոդիավորման նախագահ, ԼՂՀ վաստակավոր ուսուցիչ Վերա Խաչատրյանը օրվա կապակցությամբ շնորհավորեց ներկայից «Կարևորելով դրա խորհուրդը: Այն ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից՝ որպես ամբողջ աշխարհի երեխաների եղբայրության ու փոխըմբռնման օր, քանզի երեխաները համարվում են խոցելի խումբ և ունեն բոլորի պաշտպանության և ուշադրության կարիքը: Աշխարհի տարբեր երկրներում այս օրը կազմակերպվում են ակցիաներ, որոնցից ստացված հասույթը փոխանցվում է երեխաների բարեգործական հիմնադրամներին, հիվանդանոցներին ու մանկատներին:

«Աշխարհի երեխաներն այսօր ամենից շատ խաղաղություն են ուզում: Կար ժամանակ, իսկ դա 1992-ին էր, երբ Արցախի դպրոցներում չէր հնչում դպրոցական զանգը, երբ դասարանում ընդամենը 3-4 երեխա կար: Նրանք վախենում էին դպրոց հաճախել: Դատարկ էին Ստեփանակերտի փողոցները... Ռմբակոծության, հրետակոծության տարափ եր... Մեծ ու փոքր պատսպարվել էին նկուղ-

երում էր, որ երեխաներին դուր էր գալիս դա, և նրանք այդպես լավ էին յուրացնում նյութը: Անչափ տպավորված եմ: Ռուսական խոսքի օրերի կազմակերպման ժամանակ անհրաժեշտ է, որ Ռուսաստանից շատ մանկավարժներ գան ու տեսնեն, թե ինչպես են դասավանդում այստեղ, փորձի փոխանակում անցկացնեն... Սա տոն է, որն անհրաժեշտ է բոլորիս, և շփվելու, նոր հարաբերությունների ձևավորման համար հիանալի առիթ է»- այս կարծիքին է բանաստեղծ Վիկտոր Կոնոպլոնովը:

Նույն օրը երեկոյան ծրագրի շրջանակներում Ստեփանակերտի Երիտասարդության պալատում տեղի ունեցավ զինվորական երգի փառատոն ԼՂՀ ՊԲ զինծառայողների մասնակցությամբ:

ԽՈՒՍՈՒՄ ԵՆՔ ՌՈՒՍԵՐԵՆ...

Ռուսական խոսքի օրերի շրջանակներում Սոյեմբերի 19-ին միջոցառում է անցկացվել Մարտունու հ. 1 միջնակարգ հոսքային դպրոցում՝ քաղաքի երկու դպրոցների մասնակցությամբ:

Ռուսաստանից, ԳՅ-ից և Արցախից ժամանած հյուրերին դպրոցի բակում դիմավորեցին ավանդական աղուհացով, այնուհետև նրանք ծաղիկներ խոնարհեցին դպրոցի բակում Մավր Օհանյանի հիշատակին կառուցված խաչքարին:

Միջոցառումը սկսվեց հ. 1 դպրոցի տնօրեն Կարինե Պողոսյանի ելույթով: Այնուհետև դպրոցի աշակերտները ներկայացրին բեմագիր՝ նվիրված բանաստեղծ, երգչուհու Վլադիմիր Վիտցեկու հիշատակին: Նրանք արտասանեցին Վիտցեկու բանաստեղծությունները, ներկայացրին կենսագրությունը: Այս ամենն ուղեկցվում էր նրա կատարումներով տեսաերիզների դիտումով:

Հ. 2 միջնակարգ դպրոցի աշակերտները ներկայացրին ռուսական ժողովրդական երգեր, պարեր, հանելուկներ:

Եզրափակիչ մասում անցկացվեց ինտելեկտուալ խաղ-մրցույթ երեք թիմերի միջև: Միջոցառման ավարտին հյուրերը իրենց գոհունակությունը հայտնեցին միջոցառման կազմակերպման, երեխաների կողմից ռուսաց լեզվին տիրապետելու նակարդակի վերաբերյալ:

Բանաստեղծ Վիկտոր Կոնոպլովը երկու դպրոցների գրադարաններին նվիրեց իր նորատպա բանաստեղծությունների ժողովածուի 4-ական օրինակ:

Միջոցառման անցավ ջերմ բարեկամական մթնոլորտում, գոհ էին և՛ հյուրերը, և՛ դահլիճը, որը լեփ-լեցուն էր ծնողներով և աշակերտներով:

Օլեգ ՄԱՆՍՍՅԱՆ



ներում, որտեղ կիսում էին մի պատահաբան: Արցախը ծանր օրեր է ապրել, բայց դիմակայել է... Դիմակայել է՝ ապացուցելով, որ արցախցու ոգին կոտրելն անհնար է»:

Վ. Խաչատրյանի այս ներածականով սկսված բացման խոսքը ներկայների մոտ ծանր հիշողություններ արթնացրեց՝ ընդօժեցվելով միջոցառման նպատակը: Պակասն ասես լրացրեց հ. 5 դպրոցի սաների ներկայացրած խորհրդարանի կոմպոզիցիան՝ «Խաղաղության փողոցներ» խորագրով:

Ներկայացնելով գեղանկարները (62 x 43 չափսի)՝ երեխաներից յուրաքանչյուրը բացատրեց իր մտադրագածը՝ ինչ է ուզում ասել: Բոլոր նկարներում գերիշխում էին խաղաղության խորհրդանշանները՝ արև, աղավաղ, կապույտ երկինք ...

կապույտ երկինք ...

Երեխաները հանդես եկան Հռչակագրով՝ ուղղված Երկիր մոլորակի բնակչությանը, որում մասնավորապես ասվում է. «Մենք՝ Ստեփանակերտի դպրոցների սովորողներս, Երեխայի միջազգային օրը կազմակերպել ենք գեղանկարների փառատոն՝ «Արցախի երեխաները՝ հանուն խաղաղության» վերտառությամբ: Մեր փառատոնն անվանել ենք «Խաղաղության փողոցներ», որովհետև մենք ուզում ենք, որ Երկիր մոլորակն ամբողջությամբ դառնա մեկ միասնական խաղաղության փողոց: Պատերազմի մասին մենք գիտենք մեր ծնողների պատմածներից: Արցախում չկա մի ընտանիք, որը տուժած չլինի ահավոր պատերազմից: Պատերազմը հրեշ է, որը ոչնչացնում է բարին ու լուսավորը: Նրան դիմակայել հնարավոր է, երբ բոլորը միասնական են և ուս ուսի պայքարում են դրա դեմ: Մենք խաղաղություն ենք պահանջում Ուկրաինայի և Միջին Արևելքի երեխաների համար: Եվ այսօր մենք այստեղ՝ մեր «Խաղաղության փողոցներում» անվանմամբ գեղանկարներում, դատապարտում ենք պատերազմը և բոլորին կոչ անում խաղաղության. խաղաղություն աշխարհին, սպանեք պատերազմը, անհոժեք պատերազմը՝ աշխարհի՛ մարդիկ...»:

Օրվա երկրորդ կեսին Արցախի պետական համալսարանում տեղի ունեցավ գրական-երաժշտական կոմպոզիցիա՝ նվիրված Ս. Եսենինի ծննդյան 120-ամյակին:

«ՄԵՔ ԱՐՑԱԽՈՒՄ ՏԵՍԱՔ ՌՈՒՍԱԿԱՆ ԽՈՍՔԻ ԻՐԱԿԱՆ ՈՒԾ...»

Ռուսական խոսքի օրերի վերջին ակորդը տրվեց Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանում, որտեղ կազմակերպվել էր երաժշտական երեկո՝ նվիրված Մ. Լերմոնտովի ծննդյան 200-ամյակին:

Երեկոն բացեց ուսումնարանի տնօրեն Կարինե Դադանյանը: Նա ողջունեց Ռուսաստանից և Հայաստանից ժամանած հյուրերին, կարևորեց Արցախում անցկացվող յուրաքանչյուր նմանատիպ միջոցառում: Ապա կոլեկտիվի անունից երախտագիտության խոսքեր ուղղեց ուսումնարանի վերանորոգման աշխատանքների հովանավոր, ռուսաստանաբնակ Արմեն Շահազիզյանին, Արցախի Հանրապետության ղեկավարությանը՝ հոյակապ շենքային պայմաններ ստեղծելու համար: Շնորհակալության ու հիացմունքի խոսք ուղղվեց նաև ԳՅ առաջին տիկին Ռիտա Սարգսյանի հասցեին՝ ուսումնարանի մատուցած հաճելի նվերի՝ դաշնամուրի (ռոյալի) համար: Շուրջ երեք ամիս է պահանջվել Արցախում և Հայաստանում իր տեսակով եզակի նվերը մատուցելու միջև մեր հանրապետությանը հասցնելու համար: Ի դեպ, այդ երեկո առաջին անգամ հնչեց նոր դաշնամուրի անդրամիկ նվագը:

Երեկոյի մասնակիցներն ըմբռնվեցին փոքր, բայց հրաշալի, հոգեպարար համերգը, որի կատարողները ուսումնարանի ինչպես ներկա, այնպես էլ նախկին սաներն էին ու դասատուները:

Ինչ խոսք, ամեն սկիզբ ունի նաև իր ավարտը: Գրեթե մեկ շաբաթ տևած Ռուսական խոսքի օրերն ամփոփեց ԼՂՀ կրթության և գիտության նախարարության պետական տեսուչ Ռուբեն Օսիպովը: «Բոլոր այն միջոցառումները, որ տեղի են ունեցել ծրագրի շրջանակներում, անցել են բարձր, արիեստավարժ մակարդակով: Ռուսաց լեզվի ուսուցիչները մեկ անգամ ևս ցույց տվեցին իրենց հմտությունը, իսկ աշակերտները հաստատեցին դա: Թե՛ աշակերտները և թե՛ ուսուցիչները փաստեցին, որ Արցախում մեծ հարգանքով և վերաբերվում ռուսաց լեզվին: Որքան ուժ, ջերմություն ու տքնանք են ներդրվել այդ բոլոր միջոցառումներում: Եվ այդ ամենը փաստեց, որ Արցախում ռուսաց լեզուն գտնվում է բարձր մակարդակի վրա, ուսուցիչները հմուտ են և հայրենասեր»:

Արդյունքներից գոհ էին նաև Ռուսաստանից և Հայաստանից ժամանած հյուրերը:

Կիմ ԲԱԿՇԻ, ռուս գրող, հրապարակախոս.

«Ռուսական խոսքի օրերն առիթ էին մեկ անգամ ևս լինել այս ջրնաղ լեռնաշխարհում: Արցախն ու Հայաստանը անչափ շատ ռուս բարեկամներ ունեն: Մենք այստեղից գնալու ենք մեծ տպավորություններով և այն զգացումով, որ իզուր չենք եղել այս երկրում: Մենք տեսանք Արցախում ռուսական խոսքի իրական ուժը. ոչ մի տարածաշրջան չի կարող պարծենալ ռուսերենի իր իմացությամբ այնպես, ինչպես՝ Արցախը: Հավատացնում եմ՝ գալիք տարի, եթե դեռ ի վիճակի լինեն գալու, անպայման նորից կգան ու կմասնակցեն Ռուսական խոսքի օրերին, այս հրաշալի միջոցառմանը: Իսկ ես հավատում եմ, որ այն կլինի: Միշտ էլ հաճելի է Արցախ գալը: Շնորհակալ եմք, որ դուք կաք և մենք կարողանում ենք վայելել ձեր հոգու հարստությունը, դրական լիցքեր տանել մեզ հետ:

Լիլյա ԲԱՆՍՍՈՆՅԱՆ, ԳՅ կրթության և գիտության նախարարության ռուսաց լեզվի և գրականության գլխավոր մասնագետ.

«Ռուսական խոսքի օրերի անցկացումն Արցախում ոչ միայն անհրաժեշտ, այլև պահանջված էր:

Բոլոր դպրոցներում և ընդհանրապես ծրագրի շրջանակներում անցկացված միջոցառումները հրաշալի էին: Մեր երեխաները պետք է կիրթ մեծանան, բնությունից նրանք արդեն և՛ գեղեցիկ են, և խելոք են, բայց մեր պարտքն է նրանց լավ կրթություն տալ: Ռուսերենի իմացությունը նրանց կյանքում միշտ օգտակար կլինի՝ զարգանալու, կայանալու համար: Ես գտնում եմ, որ ռուսերենի դրված-



քը, հատկապես Արցախում, որը բազմաթիվ քաղաքական խնդիրներ ունի, անհրաժեշտություն է:

Ես հույս եմ փայփայում ու հանդաված եմ, որ շարունակական կլինեն և ավանդույթ կդառնան Ռուսական խոսքի օրերը: Դա երևում է Արցախի իշխանությունների ցուցաբերած ուշադրությունից, նրանց վերաբերմունքից: Մենք երախտագիտություն ենք հայտնում բոլորին՝ ԼՂՀ կրթության և գիտության, պաշտպանության, մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարներին: Ամեն անգամ գալով Արցախ՝ ես ուրախանում եմ՝ համեմատելով այն, ինչ եղել է նախկինում և առկա է ներկայումս:

Ուզում եմ, որ Արցախը դառնա աշխարհի հայերի կենտրոնը:

Էվելինա ԲԱՅԱՐՅԱՆ, երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի օտար լեզուների ամբիոնի դոցենտ.

«Արցախում Ռուսական խոսքի օրերը հագեցած էին և գունեղ: Յուրաքանչյուր օր, յուրաքանչյուր միջոցառում ուներ իր ձևաչափը, և բոլորն էլ մեկը մյուսից հետաքրքիր էին: Հետևությունը մեկն է՝ երեխաները հրաշալի տիրապետում են ռուսաց լեզվին, գիտեն և՛ Արցախի, և՛ Հայաստանի պատմությունը ու կարողանում են այն ներկայացնել հստակ ռուսերենով: Այդ ամենը հարստացրին Ռուսական խոսքի օրերին նվիրված տոնակատարությունները:

Լ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Լուսանկարները՝ Ա.Նսկանյանի

ԸՆԹԱՅԸ

ԱրՊՅ - 45

ՄԻՋՔՈՒԿԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԱՐՑԱԽԻ ՄԱՅՐ ԲՈՒՐՈՒՄ

Այս օրերին Արցախի պետական համալսարանը նշում է մայր բուհի հիմնադրման 45-ամյակը: Տոնակատարության շրջանակներում վերջին ամիսներին տարաբնույթ միջոցառումներ են անցկացվել: Նոյեմբերի 22-ին ԱրՊՅ նիստերի մեծ դահլիճում կայացած միջբուհական ուսանողական գիտաժողովը, որ նախաձեռնել էին Արցախի մայր բուհի և Երևանի պետական համալսարանի Ուսանողական գիտությունները, ճուշտ պես այդ շարքից էր:

Հայագիտական գիտաժողովին ներկա էին երկու հայկական հանրապետությունների մայր բուհերի դասախոսներ և ուսանողներ:

Լիագումար նիստին ողջունի խոսք ասաց ԱրՊՅ ռեկտոր Մանուշ Մինասյանը: Նա հատկապես կարևորեց երկու համալսարանների միջև օրեցօր սերտացող համագործակցությունը և դրա արդյունքում ուսանողների ուժերով և անմիջական մասնակցությամբ կազմակերպվող նմանատիպ միջոցառումները:

ԱրՊՅ և ԵՊՅ համագործակցությունն իր խոսքում կարևորեց նաև Երևանի մայր բուհի ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արարատ Մալխասյանը: Այնուհետև նա ներկայացրեց ԵՊՅ ռեկտոր Արամ Սիմոնյանի ուղերձը գործընկեր բուհի՝ Արցախի պետական համալսարանի 45-ամյակի կապակցությամբ, որում, մասնավորապես, ասված է. «Մոտ մեկ հարյուրամյակ առաջ հայոց աշխարհի Արցախ երկրին բաժին հանվեցին գոյատևման առանձնահատուկ պայմաններ, որոնք, ցավոք, բնորոշվում էին մայր հայրենիքից արհեստականորեն անջրպետվածությամբ, երկրամասի զարգացումն ամեն կերպ խոչընդոտելու և հայ ժողովրդին իր հազարամյա հողից օտարելու քաղաքականությամբ: Բարեբախտաբար, 1988 -1994թթ. հայ ժողովուրդը զենքով նվաճեց այն, ինչը պատկանում էր իրեն բնական ու բարոյական իրավունքով: Սակայն քաղաքական նկատառումների ու տնտեսական հաշվարկների վրա հիմնված միջազգային քաղաքականության ազդեցության պատճառով հայ ժողովրդի հատվածի ազատության և ազատ կամարտահայտության իրավունքին մինչ օրս համահունչ իրավական ձևակերպում չի տրվել, ինչը մեծապես խոչընդոտում է Արցախի բնականոն զարգացմանը: Հենց այս համատեքստում է այսօր չափազանց կարևորվում Արցախի թիվ 1 բարձրագույն կրթական հաստատության՝ Արցախի պետական համալսարանի գործունեության անկասելի ընթացքը: Ինքնահաստատման ոչ դյուրին ճանապարհ է անցել Արցախի մայր բուհը՝ սկզբում հիմնադրվելով որպես Բաքվի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղ, իսկ մի քանի տարի անց՝ ինքնուրույն կարգավիճակ ստանալով...»:

Հիրավի, Արցախի մայր բուհը պատվով է հաղթահարել իրեն վիճակված բոլոր փորձությունները: Եվ այսօր համայն հայությունը ուրախությամբ է ականատես լինում տարեցտարի բարձրացող դասավանդման որակին, գիտահետազոտական արդյունքի աճին, ենթակառուցվածքների բարելավմանն ու համալսարանի հասարակական ներգրավման ընդլայնմանը:

Արցախի մայր բուհի 45-ամյակի կապակցությամբ Ա. Մալխասյանը ԱրՊՅ ռեկտոր Մ. Մինասյանին հանձնեց «ԵՊՅ ոսկե մեդալը»՝ Արցախի կրթության բնագավառում ու երիտասարդ կարգերի պատրաստման գործում նրա ունեցած ավանդի համար:

Գիտաժողովի աշխատանքները ողջունեց և հաջողություններ մարտեց ԱրՊՅ ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը:

Հայագիտական գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան Արցախի և Երևանի մայր բուհերի ուսանողները: Լիագումար նիստի ժամանակ երկու զեկուցում հնչեց՝ երկուսն էլ բավականին հետաքրքիր: Առաջինը ելույթ ունեցավ ԵՊՅ պատմության ֆակուլտետի ուսանողուհի Էլինա Միրզոյանը, ում զեկուցման թեման էր՝ «Ինքնության խնդիրը Պոլսի «Ալոս» երկլեզու շաբաթաթերթում»:

Մտահոգող և արդիական էր ԱրՊՅ մանկավարժության ֆակուլտետի ուսանողուհի Արմինե Սևույանի զեկուցումը, որի թեման նվիրված էր համացանցի բացասական ազդեցությանը դեռահասների մոտ ագրեսիայի առաջացման գործում: Հնչեցին առաջարկություններ այդ առնչությամբ:

Լիագումար նիստից հետո միջբուհական գիտաժողովն իր աշխատանքները շարունակեց երեք բաժանումներում՝ բանասիրության, պատմության և քաղաքագիտության (սոցիոլոգիա):

Աշխատանքներն ավարտվելուց հետո տեղի ունեցավ գիտաժողովի արդյունքների ամփոփում, որից հետո մասնակիցներին հանձնվեցին հավաստագրեր:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎԵՑԻՆ «ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԸ

Նոյեմբերի 3-ից 15-ը Մարտունու հ. 2 հիմնական դպրոցում շրջանի հանրակրթական դպրոցների «Ինֆորմատիկա» առարկան դասավանդող ուսուցիչների համար «Գյուլնուրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» գիտակրթական հիմնադրամը, Հայ կրթական հիմնարկության օժանդակությամբ, Հայ օգնության ֆոնդի հովանավորությամբ իրականացրել է վերապատրաստման դասընթացներ, որոնց նպատակն էր իրագրել ոլորտում տեղի ունեցող փոփոխություններին, նորամուծություններին, բարձրացնել ուսուցիչների կրթական, մասնագիտական մակարդակը: Դասընթացները վարել է «Գյուլնուրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի» ուսանող Արզին Նիկոլյանը: Մեր զրույցի ժամանակ Արզինը նշեց, որ ՊՏՏԿ-ի նպատակն է՝ պատրաստել աշխատաշուկայում տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում պահանջարկ ունեցող մասնագետներ, աջակցել վերոհիշյալ բնագավառում շուկայի զարգացմանն ու ընդլայնմանը՝ միջազգային և տեղական ներդրումների համար գրավիչ պայմանների ձևավորմամբ, բարձրացնել բնագավառի աշխատողների զարգացման հնարավորությունները՝ խթանելով հասարակական բոլոր ոլորտներում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմանը, և վերջապես, հնարավորություն տալ ապակենտրոնացնելու տեղեկատվական տեխնոլոգիաների շուկան Երևանից դեպի մարզեր՝ նպաստելով երկրի տնտեսության առաջխաղացմանը: Անցնելով հիմնադրամի կողմից իրականացվող աշխատանքներին՝ նշեց, որ այն իրականացնում է նաև երկամյա հետբուհական կրթական ծրագիր՝ վեբ տեխնոլոգիաներ, մոբայլ տեխնոլոգիաներ, համակարգչային նախագծում: Այս տարի ծրագրում ընդգրկված են նաև Արցախի Մարտունու, Մարտակերտի և

Ասկերանի շրջանների դպրոցների ինֆորմատիկայի ուսուցիչները: Երջկենտրոնում կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին մասնակցել են Մյուրիշենի, Ավդուռի, Հացու, Ննգու, Կաղարծու, Վարանդայի դպրոցների ուսուցիչները: Դասընթացին ուսուցիչներին ավելի շատ հնարավորություն է տրվել զարգացնել գործնական հմտությունները առանձնապես նոր ծրագրերի կիրառման մեջ, ինչը հետագայում թույլ կտա կատարելագործել «Ինֆորմատիկա» առարկայի դասավանդման մեթոդական գործնականում:

հիմնարկությունը ստեղծվել է Ամերիկայում 1950թ.: 1988-ի ավերիչ երկրաշարժից հետո իր գործունեությունը սկսել է ծավալել Հայաստանում, 1999-ից՝ Արցախում: Հայաստանի մարզերում, Ջավախքում, Արցախում մեծ թիվ են կազմում այն դպրոցները, որոնք ունեն վերանորոգման կարիք: Նրա աջակցությամբ դպրոցներ են կառուցվել, վերանորոգվել, կրթաթոշակներ են տրամադրվում ինչպես հայրենիքում, այնպես և Սփյուռքում ապրող և սովորող հայ երեխաներին:

Ծրագրերից զխավորը գյուղական դպրոցները վերա-



վերապատրաստում անցած ուսուցիչներին կհանձնվեն Հայ կրթության հիմնարկության և ՊՏՏԿ ԳԿԳԻ-ի կողմից իրականացվող «Ինֆորմատիկա» առարկայի վերապատրաստման դասընթացը հաջողությամբ ավարտելու մասին վկայականներ, ինչպես նաև՝ վերապատրաստման մասնակից դպրոցները Հայ կրթական հիմնարկության կողմից կստանան 2-ական համակարգիչ և տպիչ սարք:

Նշվեց նաև, որ դասընթացների կազմակերպման ծրագիրը շարունակական բնույթ կունենա, և տարեցտարի մեր ինֆորմատիկայի մասնագետները դրա շնորհիվ հնարավորություն կունենան կատարելագործվելու իրենց մասնագիտության մեջ:

Ա.Նիկոլյանն իբրև հավելում նշեց, որ Հայ կրթական հիմնարկության գործունեության մյուս կարևոր ուղղությունը կրթաթոշակներն են, որոնք տրամադրվում են Սփյուռքի, Հայաստանի, Արցախի առաջավոր ուսանողներին: Հիմնադրամի շարունակական գործունեության շնորհիվ բազմաթիվ շնորհալի հայ երեխաներ Հայաստանում և այլ երկրներում կարողացել են բարձրագույն կրթություն ստանալ և հետագայում իրենց ներդրումն ունենալ հայության շահերի պաշտպանության և հայրենի եզրերի զարգացման գործում:

ԿԱՐԻՆԵ ՂԱԿԱՍՅԱՆ

ԲԱՑ ԴԱՍ՝ ԲԱՑ ԵՐԿՆԵՒ ՏԱԿ

Խուճկ եմ ծխում մարդու անմիջ երազների առջև, եթե նրանք լուսավոր են ու լի են հավատով: Այդ երազների պատվանդանը մեր անցյալն է, պատմությունը, որի փոշին մեկ-մեկ պիտի սրբվի...Թող աչ ու ձախ, ապագա ու անցյալ սավառեն մեր անքնին պրպտունները՝ լուսավոր, հուզախոսով: Իսկ ի՞նչ գույն ունեն այսօրվա մանուկների երազները, ո՞ւմ ձեռքերում են վաղվա մեր երկիրն ու նրա ապագան:

Վաղվա մեր երկրի տերը մեր անցյալը, մեր այսօրը լավ հասկացող ու գնահատող այն մարդը պիտի լինի, ով ամուր է կանգնած այս հողի վրա, սիրով է լցված յուրաքանչյուր թիզ հողի, քար ու ապառաժի, պատմական հուշարձանների ու այստեղ ապրող մարդկանց հանդեպ...Ճշմարիտ է ասված՝ հայրե-

նասիրությունը սկսվում է հայրենագիտությունից:

Այդ նպատակին էր ծառայում էքսկուրսիան, որը կազմակերպել էր Ստեփանակերտի 12-րդ դպրոցի ուսուցիչ Արեն Բալայանը:

Ոսկեդեղին, աշնանային մեղմությամբ շնչող այդ օրը աշակերտների ուրախ տրամադրությունից ալիք էր տալիս դպրոցի բակը: Ճանապարհի ամբողջ տարածքը լի էր հարց ու պատասխաններով, պարզաբանումներով:

Տիգրանակերտն իր զարմանահրաշ տեսարաններով գրավել էր ամենքին:

Բացվում են մեր երևակայության դռները: Տիգրանակերտը վերակերտվում է մեր մտապատկերներում հառնած մոխիրներից: Մեր առջև բացվում են Տիգրան Մեծի ժամանակները...Նոր սերունդը ծլեցին մեր իմացության

հունդերում: Ակոսներ գոյացան ճաք տված պատմությունից, որոնք լցված են առեղծվածներով, բազմաթիվ հարցականներով:

Այդ ամենի մեջ հաստատ մի բան կար: Հայի շինարար ձեռքի ուժը, որ երբեք չի հոգնում շինելուց ու վերաշինելուց, միշտ ու ամեն տեղ հրաշքներ գործելուց:

Ժամանակը, տարիներն ու թշնամին ավերում են ամեն ինչ, իսկ նա մոխիրների միջից շունչ է տալիս քար ու ապառաժին...

...Բարձունքին, մենության մեջ կարծես աղոթում էր մատուռ-եկեղեցին: Մեզ ձգեց այն: Դժվարին վերելքից հետո թևավորվեցին մեր հոգիները, մեր լուռ մրմունջները՝ ճերմակ ու անտես, երկինք բարձրացան՝ փառավորելով Տիրոջը. մենք ազատ շնչում ենք մեր հողի վրա:

Ետդարձի ճանապարհին այնքան ոգևորությամբ էին աշակերտներն արտահայտում իրենց տպավորությունները: Ապրումների հրավառությունը մասնակիցների դեմքերն օժել էր մի յուրատեսակ զոհունակությամբ, որը շաղախված էր հավատով. հավատ՝ դեպի մեր ապագան, հպարտությամբ ու պատկառանքով՝ դեպի մեր անցյալն ու պատմությունը...

Բաց դասը՝ բաց երկնքի տակ, տվեց իր արդյունքները:

Նարինե ՀԱՅՐԻՅԱՆ
Ստեփանակերտի հ.12 հիմնական դպրոցի կազմակերպիչ

ՓՈՐՁ


ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՔԻՄԻԱՅԻ ՂԱՍԵՐԻՆ

Նոր տեխնոլոգիաների կիրառումը հարավարևելյան պահանջում է ոչ ստանդարտ մտածողությամբ, արտադրության մեջ և սոցիալական կյանքում նոր որակ ստեղծող, նոր խնդիրներ առաջարկող և լուծող մարդկանց առկայություն:


Այս հարցի լուծումը սկսվում է դպրոցից, որտեղ այլևս հնարավոր չէ օգտագործել միայն ուսուցման պլանդական մեթոդներ:

Ընդհանրապես մանկավարժները առանձնացնում են ուսուցման երեք հիմնական մեթոդ:

1. Պասիվ, որի ժամանակ սովորողները հանդես են գալիս որպես «օբյեկտ», որոնք պետք է վերարտադրեն ուսուցչի տված գիտելիքները: Այստեղ օգտագործվում է պատմելու և դասախոսության մեթոդը: Այն կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով:




2. Ակտիվ, որտեղ սովորողները «սուբյեկտ» են, որոնք ակտիվ շփման մեջ են ուսուցչի հետ: Այստեղ օգտագործվում է հիմնականում հարց ու պատասխանի մեթոդը: Այն պատկերները հետևյալ կերպ:



3. Ինտերակտիվ, որտեղ հիմնական շեշտը դրվում է երեխաների անհատական ստեղծագործական ունակությունների զարգացմանը, և շատերը կհամաձայնեն չինական հայտնի ասացվածքին. «Ասա ինձ, ես կմոռանամ: Ցույց տուր ինձ, ես կարող եմ հիշել: Թույլ տուր՝ ես դա կատարեմ, և այն ինձ կդառնա հավիտյան»:

Այս մեթոդի գծապատկերը կլինի այսպես.



Պետք է նշել, որ ինտերակտիվ ուսուցումը մարդու ճանաչողական գործունեության, աշխարհընկալման մի ձև է: Այն նպատակ ունի ստեղծագործել ուսուցման այնպիսի պայմաններ, որի դեպքում սովորողը կարողանա լիովին դրսևորվել և ի հայտ բերել իր մտավոր բոլոր ունակությունները, որն էլ վերջին հաշվով արդյունավետ է դարձնում բուն ուսուցման գործընթացը:

Ինտերակտիվ ուսուցման էությունն այն է, որ ուսուցումն այնպես է կազմակերպվում, որ բոլոր սովորողները ընդգրկվում են ճանաչողական գործընթացում. նրանք հնարավորություն են ունենում հասկանալ այն ամենի պատճառները, ինչի մասին մտածում են: Սովորողների համատեղ գործունեությունը նյութի ընկալման գործընթացում նպաստում է կարծիքների, գիտելիքների և ճանաչողական ունակությունների՝ մեկը մյուսին փոխանցմանը, քանի որ այս դեպքում ամեն մեկն իր ներդրումն է ունենում նյութի ընկալման գործում: Ընդ որում, դա կատարվում է փոխըմբռնման և համագործակցության ջերմ մթնոլորտում, որն ավելի է հեշտացնում ընդհանուր խնդիրների լուծումը: Ինտերակտիվ ուսուցումը բացառում է մի հոգու ելույթը:

Արդեն ութ տարի է, ինչ դասավանդում են այդ ընթացքում կիրառել են ուսուցման ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ: Նախ՝ հավաքում են դիդակտիկ խաղեր, դրանք ընդհանրացնում, համակարգում, ամփոփում և համապատասխանեցնում քիմիայի առանձին դասերին: Դրանք նպաստում են առարկայի նկատմամբ հետաքրքրության աճին, ինչպես նաև զարգացնում են սովորողների ստեղծագործական միտքը, ուշադրությունը, խոսքը, ինչն էլ հեշտացնում է յուրացումը:

Երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացման համար կարելի է հանձնարարել՝ հորինել քիմիական հեքիաթ, լեգենդ, երես, խաչքառ, գլուխկտրուկ կամ առանձին թեմաներ մատուցել այդ ձևով: Օրինակ՝ «Ջրածին»: «Ջուր» թեման ամփոփելիս կարելի է սովորողներին հանձնարարել գրել հեքիաթ: Ահա աշակերտների գրած հեքիաթներից մեկը.

«Ժուկով՝ ժամանակով ապրում էր մի թագավոր: Նա ուներ մի աղջիկ՝ Ջրածին անունով: Երբ աղջիկը մեծացավ, թագավորը որոշեց ամուսնացնել նրան: Նա հրամայեց, որ թագավորության բոլոր երիտասարդները ներկայանան իրեն: Առաջինը ներկայացավ Ազոտը: Ազոտի տեսքը շատ դուր եկավ թագավորին, բայց նրա ծնողները աղքատ գյուղացիներ էին և չէին կարող ապահովել հարսանիքի համար անհրաժեշտ 400-500°C ջերմաստիճանը: Ծեր թագավորը հրամայեց կանչել հաջորդ թեկնածուին: Ներս մտավ կանաչադեղնավուն կոստյում հագած մի երիտասարդ, որին Քլոր էին անվանում: Թագավորին դուր եկավ Քլորը, և որոշեց աղջկան ամուսնացնել նրա հետ: Բայց թագավորի իմաստուններից մեկը հուշեց ապագա թոռան բնույթի մասին, որը կունենա ուժեղ թթվային հատկություն և անընդհատ կայրի պապիկին: Թագավորը համաձայնվեց իմաստունի հետ և մերժեց

Քլորին: Մյուս երիտասարդը համեստ ու հանգիստ, աշխատասեր Թթվածինն էր: Թագավորը շատ հավանեց Թթվածնի հատկությունները և աղջկան ամուսնացրեց նրա հետ: Թագավորի թոռնիկը՝ Ջուրը, շատ լավ էր վերաբերվում պապիկի հետ, որտեղով որ անցնում էր, շուրջբոլորը կանաչում և ծաղկում էին, շունչ էր առնում կյանքը, իսկ պապիկը նայում էր թոռնիկին ու գոհ ժպտում»:

Քիմիայի դասապրոցեսում կիրառվող խաղերն օգտագործվում են ինչպես նոր նյութի բացատրման, այնպես էլ կրկնության, ամփոփման և սովորողների գիտելիքների ստուգման ժամանակ: Ներկայացնենք այդ խաղերից մի քանիսը.

1. «Քիմիական մրցակազմ»

«Քիմիական տարրերի նշանները» թեման ուսումնասիրելիս կարելի է օգտագործել այս խաղը: Դասը պետք է անցկացնել մարզադահլիճում կամ մարզահրապարակում: Քանի որ քիմիական տարրերի նշաններին սովորողները ծանոթանում են 5-րդ դասարանի բնագիտության դասընթացում, ուստի 7-րդ դասարանում ուսուցիչը պետք է խորացնի և ամրապնդի սովորողների ունեցած գիտելիքները: Նախօրոք ուսուցիչը թղթից պատրաստում է շրջանակներ, նրանց վրա գրում քիմիական տարրերի նշանները: Դասարանը բաժանում է հավասար ուժերից կազմված երկու թիմերի: Թիմերն ընտրում են անուններ և սկսում խաղը: Ուսուցիչը յուրաքանչյուր զույգի մեկնարկի ժամանակ նշում է քիմիական տարրը, իսկ մրցող զույգերը պետք է արագ հասնեն նշաններին, գտնեն անհրաժեշտ տարրի նշանը և բերեն թիմ: Դադարով է ճանաչվում այն թիմը, որը ճիշտ և արագ հավաքում է նշված տարրերը:

2. «Քիմիական լոտո»

Այս խաղը կարելի է օգտագործել դասի խթանման և կշռադատման փուլում: 7-րդ դասարանում «Քիմիական տարրերի նշաններ» թեման ամփոփելիս ուսուցիչը պատրաստում է խաղաքարտեր և ծրարներ: Ներկայացնենք խաղաքարտի երկու օրինակ.

Table with 2 sections: 'խաղաքարտ 1' and 'խաղաքարտ 2'. Each section contains a 3x3 grid with chemical symbols and names.

Յուրաքանչյուր աշակերտ ստանում է մեկ խաղաքարտ և մեկ ծրար, որի մեջ գտնվում են նշված տարրերի նշանները: Սովորողները պետք է արագ տարրերի նշանները տեղադրեն համապատասխան վանդակներում:


Նույն խաղը կարելի է օգտագործել «Ատոմի կառուցվածքը» թեման ամփոփելիս:

խաղաքարտի նմուշ

Table with 3 columns: Ar(?)=23, 4-րդ պարբերության, 2-րդ խմբի, երկրորդային ենթախմբի տարր, ատոմային թիվ 47 պրոտոն, ատոմային թիվ 5 էլեկտրոն, միջուկի լիցքը +19, 2e, 8e, 2e, գտնվում է 4-րդ պարբերությունում, բարձրագույն օքսիդի բանաձևն է R2O, 2e, 8e, 3e

3. «Գտիր զույգը»

9-րդ դասարանում «Երկաթ» թեմայի անրապնդման դասին կարելի է օգտագործել այս խաղը: Այն տևում է 10 րոպե: Մասնակիցները խաղում են զույգերով: Յուրաքանչյուր զույգի տրվում է ծրար, որում գտնվում են երկաթի և նրա միացությունների մասնակցությամբ ընթացող ռեակցիաների առանձին մասերը: Յուրաքանչյուր ծրար պարունակում է 18 քարտ՝ 8x2 չափով, որոնց վրա գրված են ռեակցիաների աջ կամ ձախ մասերը: Ձույգերը, համագործակցելով միմյանց հետ, պետք է, ինչքան հնարավոր է, արագ վերականգնեն ռեակցիաների հավասարումները: Ուսուցիչը ստուգում է աշխատանքը՝ դրանք համեմատելով էտալոնային տարբերակի հետ.



Այս խաղը կարելի է օգտագործել նաև «Ածխաջրածիններ» թեման ամփոփելիս:

Կլիխ ԱՋԻԶՅԱՆ
Վաղուհասի միջև. դպրոցի քիմիայի ելկենսաբանության ուսուցչուհի

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԱՃԻԱՏԱՆՔՆԵՐԸ

Նոյեմբերի 17-ը քաղաքակիրթ աշխարհը նշում է որպես Ուսանողների միջազգային օր: Տոնի առթիվ Ստեփանակերտի քաղաքային պատկերասրահը (տնօրեն՝ Ելենա Դադայան) և Արցախի նկարիչների միությունը, ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ, կազմակերպել էր երիտասարդ նկարիչների աշխատանքների ցուցահանդես:

Բացելով ցուցահանդեսը՝ ԼՂՀ նկարիչների միության նախագահ Լենորդ Զաքարյանը տեղեկացրեց, որ ցուցահանդեսին մասնակցում են 32 պատանի և երիտասարդ նկարիչներ՝ 33 և ԼՂՀ տարբեր բուհերից և քոլեջներից: Երևանից մասնակցում են 6 նկարիչ՝ զեղարվեստի պետական ակադեմիայից, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանից և Փանոս Թերլեմեզյանի անվան պետական քոլեջից: Ներկայացուցիչ կա նաև Վանաձորից: Ներկայացված է 73 աշխատանք:

Շուշիի «Գյուլջյան» կիրառական արվեստի ինստիտուտի ղեկավար Յու. Գրիգորյանը կարևորեց ցուցահանդեսը հետևյալ տեսանկյունից. դա լավագույն հնարավորություն է երիտասարդների համար՝ իրենց գործերը ճանաչելի դարձնելու հարցում. «Այս ցուցահանդեսը հազվադեպ երևույթ է՝ առաջին հերթին ինքը քեզ տեսնելու և համեմատվելու հարցում»:



լու առունով: Այդպես մարդու աշխարհընկալումն ավելի է լայնանում, մտահորիզոնը՝ զարգանում, որն էլ օգտակար է երիտասարդ ստեղծագործողի համար: Գիշերը մի բան՝ նկարչի երկխոսությունը դիտողի հետ տեղի է ունենում ցուցահանդեսների միջոցով»,-ասաց Յու. Գրիգորյանը:

Պատկերասրահի աշխատակից Նոնա Գրիգորյանը տեղեկացրեց, որ նախօրոք աշխատել են ուսանողների հետ, որն էլ նպաստել է ցուցահանդեսի կայացմանը:

Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան զեղարվեստի քոլեջի դիպլոմի բաժնի 4-րդ կուրսի սովորող Անահիտ Ընթրյանն առաջին անգամ էր մասնակցում ուսանողական ցուցահանդեսի. ներկայացրել էր «Մանրանկարի իմպրովիզ»-ի 3 աշխատանք: Գեղինակը նշեց, որ անչափ ոգևորված է, քանի որ նման ցուցահանդեսներում ներկայանալը շատ կարևոր է երիտասարդ ստեղծագործողի համար:

Ուսանողներին տոնի առթիվ շնորհավորեց և ցուցահանդեսը ողջունեց նաև Շուշիի պետական թանգարանի տնօրեն Լուսինե Գասպարյանը:

Վերջում հավելենք, որ նման միջոցառումները շատ կարևոր են երիտասարդ ստեղծագործողների համար. բերում են ճանաչում, մեծացնում պատասխանատվության զգացումը:

Վարսենիկ ԸՈՔՈՅԱՆ

ԱՃՆԱՆ ԿԱՆԴԵՍ

ՋԵՐԱ ԳՈՒՅՆԵՐՈՎ

«Աշուն, աշուն, աշուն, Ջերմ գույներով նախշուն, Ո՞վ է այդպես շռայլ Քեզ գույնզգույն նախշուն»:

Մեր մանկապարտեզներում գեղեցիկ ավանդույթ կա՝ տարվա եղանակների գովքը կատարել նրանց նվիրված միջոցառումների կազմակերպումով: Նման միջոցառում էր նույնքան 7-ին Մարտունու հ.1 մանկապարտեզում:



Նրանում ներգրավված էին միջին խմբի երեխաները (դաստիարակներ՝ Առլեստա Պողոսյան, Գայանե Հայրունյան): Աշունն այգեկույթի, բերքահավաքի, առատության խորհրդանիշ է, ուստի միջոցառումը նաև բերքի փառաբանման տոն էր:

Շնորհավորանքի խոսքով ներկաներին դիմեց տնօրեն Էմմա Երեմյանը: Նա փոքրիկներին մաղթեց լինել աշնան սրբերի պես քաղցրահամ: Նրանք են մեր ուրախությունը, նրանցով է իմաստավորվում մարդու կյանքը, ուստի նրանց երջանկությամբ է պայմանավորված մեծերի երջանկությունը: Նա ցանկացավ, որ մեր բալիկների կյանքն ունենա աշնանային սրբերի անուշությունն ու հուտը, լինի երկար ու ապահով:

տիկի մուտքը մեծ աշխուժություն մտցրեց: Միասին երգեցին «Խնոցի» երգը, պարեցին, արտասանեցին: Մի խոսքով՝ միջոցառումն իսկական տոնի վերածվեց:

Այնուհետև Աշուն տատիկն բարենաղթեց մանուկներին, որ այլևս պատերազմ չլինի, ապրեն խաղաղ ու երջանիկ կյանքով, բոլորի տներում առատություն լինի, մեր փոքրիկներն էլ ապրեն երջանիկ, իրենց հայտնեց փոքրիկներին՝ իրենց ակտիվության և ցուցաբերած գիտելիքների համար: Մանկապարտեզում իրականացվող աշխատանքը բավականին դժվար ու պատասխանատու գործ է, որը պահանջում է նվիրում և հետևողականություն: Նա մաղթեց, որ այն կատարվի պատշաճ մակարդակով, երեխաներն էլ լավ սովորեն, լինեն խելոք, ուշիմ ու կարգապահ, ապրեն խաղաղ, անամպ երկնքի ներքո, միշտ լինեն սիրով և ուշադրությամբ շրջապատված:

Իրոք, երեխայի կրթության ու դաստիարակության կարևոր օջախներից մեկն էլ մանկապարտեզն է, որտեղ կատարվում են երեխայի աշխարհընկալման և ինքնադրսևորման առաջին քայլերը: Այդ աշխատանքի արդյունավետությունը կախված է նաև պայմաններից, որի շուրջ միջոցառումից հետո գրուցեցինք տնօրենի հետ: Մանկապարտեզ հաճախում է 115 երեխա, կա 4 խումբ: Տարվա ընթացքում բարերարների կողմից բավականին աջակցություն է ցուցաբերվել: Նվիրել են լվացքի մեքենա, սառնարան, էլեկտրական մսաղաց, սպասք և այլն, ինչի համար էլ նա իր և տնօրինության երախտագիտությունը հայտնեց: Շենքն ունի հիմնամորոզման կարիք, և տնօրենը հուսով է, որ մոտ ապագայում այն ևս կկատարվի:

Իրոք, երեխայի կրթության ու դաստիարակության կարևոր օջախներից մեկն էլ մանկապարտեզն է, որտեղ կատարվում են երեխայի աշխարհընկալման և ինքնադրսևորման առաջին քայլերը: Այդ աշխատանքի արդյունավետությունը կախված է նաև պայմաններից, որի շուրջ միջոցառումից հետո գրուցեցինք տնօրենի հետ: Մանկապարտեզ հաճախում է 115 երեխա, կա 4 խումբ: Տարվա ընթացքում բարերարների կողմից բավականին աջակցություն է ցուցաբերվել: Նվիրել են լվացքի մեքենա, սառնարան, էլեկտրական մսաղաց, սպասք և այլն, ինչի համար էլ նա իր և տնօրինության երախտագիտությունը հայտնեց: Շենքն ունի հիմնամորոզման կարիք, և տնօրենը հուսով է, որ մոտ ապագայում այն ևս կկատարվի:

Միջոցառմանը ներկա էր մանկապարտեզի նախկին տնօրեն Դոնարա Աբրահամյանը: Նա ևս շնորհավորեց բոլորին՝ երեխաներին, ծնողներին և մանկապարտեզի աշխատակիցներին Աշնան տոնի կապակցությամբ, շնորհակալություն

Կ. ՂԱՍՏԱՆ

Շնորհավորանք

ԱՆՎԵՐԱՊԱՆՆԻ ԿԻՐՈՒՄ



Բոլորեց վաստակաշատ ուսուցչուհի Մարիետա Գևորգյանի ծննդյան 60-րդ տարին:

Իր կյանքի լավագույն տարիները Մ.Գևորգյանը նվիրել է մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության գործին: Նա երբեք դուրսից ճանապարհներ չի փնտրել: Պատանեկան տարիներից հրապուրվելով ֆիզիկայով՝ Մ.Գևորգյանը որոշում է դառնալ ֆիզիկայի ուսուցչուհի և իր աշակերտների համար բացել այդ գեղեցիկ և զարմանահրաշ աշխարհը, թափանցել ֆիզիկայի խորքերը՝ տանելով նրանց բազում արահետներով, վեր հանել բնության բազմաթիվ գաղտնիքները և

տալ լուծումներ:

Եվ դա փայլուն կերպով նրան հաջողվում է անել արդեն տասնյակ տարիներ: Եթե մի խոսքով կարելի լիներ բնութագրել այդ բազմավաստակ ուսուցչուհուն, ապա դա նվիրումն է, անվերապահ նվիրում իր սիրած մասնագիտությանը, նվիրում՝ ընտանիքին և զավակներին, նվիրում՝ հայրենի դպրոցին, որտեղ նա աշխատում է 1975 թվականից: Իր ճշտապահությամբ, պատասխանատվությամբ մեծ զգացումով և անաչառ վերաբերմունքով Կ.Գևորգյանը արժանացել է իր գործընկերների, աշակերտների և ծնողների խորը հարգանքին:

Մ.Գևորգյանի մարդկային բարձր որակները երևում են ոչ միայն աշխատավայրում, այլ նաև ընտանիքում: Նա երկար տարիներ խնամում էր իր հիվանդ ծնողներին (մի քանի տարի առաջ նա, ցավոք, կորցրեց հորը, իսկ մայրը մինչև այժմ նրա խնամքի տակ է), երկու արժանավոր զավակների մայր է, սիրող կին և բարի ու հոգատար տատիկ:

Ա.Ղուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցի ուսուցչական կոլեկտիվը մեծ սիրով շնորհավորում է Մարիետա Գևորգյանի 60-ամյա հոբելյանը, ցանկանում երկար տարիների կյանք, քաջառողջություն և իր նվիրական երազանքների կատարում:

Ստեփ. Ա. Ղուլյանի անվան հ.2 հիմն. դպրոցի ուսուցչական կոլեկտիվ

Շնորհավորանք

ՀԱՐԳԱՆՔ ՈՒ ՄԵՐ՝ ԱՆԽՈՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ



Նոյեմբերի 20-ին լրացավ վաստակաշատ մանկավարժ, հմուտ տնօրեն, լավ ու հարգված մարդ Վահագն Մեծլումյանի ծննդյան 60-ամյակը: Մենք՝ նրա դպրոցական և ուսանողական ընկերներս, որոշեցինք թղթին համծնել մի քանի տող, որը լավագույնս կբնութագրի նրա կերպարը:

Մարդ, որի խոսքը տարբերվում է ներքին ուժով, համոզվածությամբ, որի մարդկային բոլոր լավագույն որակները կազմում են նրա հոգու հարստությունը:

Վահագն Մեծլումյանը 1976թ. բացարձակ գերազանց ցուցանիշներով ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժինը: Նա այդ տարիներին կարող էր մնալ մայր բուհում՝ որպես մաթեմատիկայի դասախոս, բայց ընտանեկան դրությունից ելնելով՝ գնաց հայրենի գյուղ՝ Մյուրիշեն: Այնուհետև 3 տարով գործուղվեց Արթուրյանի Իսմայիլի շրջանի Քյայբաբե հայկական գյուղ՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: Դպրոցի կոլեկտիվը և տնօրենը միանգամից նրան վստահեցին բարձր դասարանների մաթեմատիկայի դասավանդումը:

Չնայած նա հարազատ գյուղում չէր աշխատում, բայց Մյուրիշենի ուսուցչական կոլեկտիվը վաղուց էր սպասում նրա վերադարձին: Եվ ասա 1980թ. նշանակվեց Մյուրիշենի 8-ամյա դպրոցի տնօրեն և ղեկավարեց մինչև 2011թ., որից հետո տեղափոխվեց հարևան Վազգենաշեն գյուղը՝ որպես միջնակարգ դպրոցի տնօրեն: Ամենուր, որտեղ էլ նա աշխատել է, բարձր են գնահատվել նրա անձնային որակները, նրան երախտապարտ են իր բազմամյա, անխոնջ աշխատանքի համար: Նա իսկական մեծատառով մարդ է, ազնիվ, անկեղծ՝ զինված մեծ համբերությամբ, անմիջական բոլորի հետ: Որպես տնօրեն՝ նա լավ է տիրապետում դպրոցավարությանը, ունի բարձր պատասխանատվություն վստահված գործի նկատմամբ: Նա տարբեր կոլեկտիվներում ղեկավարելու և դասավանդելու յուրօրինակ հմտություն ունի: Իսկ թվերի մոգական աշխարհը նրա տարերքն է:

Վ.Մեծլումյանը որակվում է որպես ոչ միայն մաթեմատիկայի, այլև մյուս առարկաների գիտակ: Նրան հաջողվում է սաների մեջ սեր առաջացնել ուսման նկատմամբ: Վ. Մեծլումյանի մասին հարգանքով ու սիրով են խոսում նրա աշակերտները, որոնք այսօր աշխատում են տարբեր բնագավառներում:

Շնորհավոր 60-ամյակը, սիրելի՛ հոբելյար: Մենք Ձեզ մաղթում ենք քաջ առողջություն, եթե՛ գիտության ուղիներով: Ձեզ երկար կյանք, ամենայն բարիք:

Մի խումբ ընկերներ

ԱՊԱՋԻՆ ՏՈՆԸ ՆՈՐԱԿԱՊՈՒՅՑ ԴՊՐՈՑՈՒՄ

Աշնանային այդ օրը մի նոր քնքշությամբ, նոր գույներով ու նոր ձևերով բացահայտվեց Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցում, որտեղ օրերս տեղի ունեցավ մախադարոցական խմբի «Ոսկե աշուն» հանդեսը:

Այն գեղեցիկ ու հիասթափեց էր իր բերք ու բարիքով, անկրկնելի՝ գեղեցիկ գույների համադրությամբ:



Այդ օրը մենք ականատես եղանք նախադպրոցական «Արևիկ» խմբի հիանալի միջոցառման, որը կազմակերպվեց խմբի դաստիարակ Տարուհի Ապրեսյանի անմիջական նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ:

Խայտաբղետ գույների այնքան գեղեցիկ ու քնքուշ համադրումներով էին ձևավորել դահլիճը, որ ականայից բոլորը համակվեցին աշնանային տրամադրությամբ, բայց ոչ տերյանական թախիծով, այլ ուրախությամբ, խինդով ու ծիծաղով:

Դա նորակառույց դպրոցում անդրանիկ միջոցառումն էր, որին

մասնակցում էին երեխաների ծնողները, հարազատները և դպրոցի տարրական դասարանների աշակերտներ, ուսուցիչներ:

Դահլիճը ձևավորված էր աշնան բարիքներից պատրաստված գեղեցիկ զամբյուղներով, խայտաբղետ տերևներով, աշնանային գույնզգույն ծաղիկներով, որոնք ծնողների ձեռքի աշխատանքներն էին:

Հատկապես նկատարժան էր այն դաստիարակությունը, որ նա ստանում էր դպրոցում և ընտանիքում: Միջոցառումը սկսվեց դաստիարակի ողջույնի խոսքով՝ ուղղված ներկաներին:

Աշնանը նվիրված բանաստեղծությունները, երգն ու հեքիաթների փոքրիկ բեմականացումները թրթրվախոս մանուկների կատարմամբ հարուցեցին բոլորի հիացական վերաբերմունքը: Փորձառու մանկավարժը աշխատում է բաց չթողնել ոչ մի տոնական օր, նրա աշխատանքը նախապես կանոնակարգված է, իսկ նվիրված ու ջերմեռանդ աշխատանքը միշտ էլ տալիս է իր ցանկալի արդյունքը: Լինի դա տոնական միջոցառում, ցուցադրական համաքաղաքային պարապմունք, թե ամենօրյա դաս: Միջոցառումներին նա կարողանում է ակտիվ ներգրավել նաև ծնողներին, որոնք միշտ պատրաստ են աջակցություն ցուցաբերել, որով էլ ապահովվում է դպրոց-ծնող կապը հենց նախադպրոցական խմբից:

Միջոցառման ավարտին հանդես եկավ դպրոցի տնօրեն Վ. Դահրամանյանը՝ շնորհավորական ու շնորհակալական խոսքով՝ ուղղված և՛ փոքրիկներին, և՛ դաստիարակին, և՛ միջոցառմանը աջակցող բոլոր մասնակիցներին:

Հատկապես նկատարժան էր այն դաստիարակությունը, որ նա ստանում էր դպրոցում և ընտանիքում:

Միջոցառումը սկսվեց դաստիարակի ողջույնի խոսքով՝ ուղղված ներկաներին:

Աշնանը նվիրված բանաստեղծությունները, երգն ու հեքիաթների փոքրիկ բեմականացումները թրթրվախոս մանուկների կատարմամբ հարուցեցին բոլորի հիացական վերաբերմունքը: Փորձառու մանկավարժը աշխատում է բաց չթողնել ոչ մի տոնական օր, նրա աշխատանքը նախապես կանոնակարգված է, իսկ նվիրված ու ջերմեռանդ աշխատանքը միշտ էլ տալիս է իր ցանկալի արդյունքը: Լինի դա տոնական միջոցառում, ցուցադրական համաքաղաքային պարապմունք, թե ամենօրյա դաս: Միջոցառումներին նա կարողանում է ակտիվ ներգրավել նաև ծնողներին, որոնք միշտ պատրաստ են աջակցություն ցուցաբերել, որով էլ ապահովվում է դպրոց-ծնող կապը հենց նախադպրոցական խմբից:

Միջոցառման ավարտին հանդես եկավ դպրոցի տնօրեն Վ. Դահրամանյանը՝ շնորհավորական ու շնորհակալական խոսքով՝ ուղղված և՛ փոքրիկներին, և՛ դաստիարակին, և՛ միջոցառմանը աջակցող բոլոր մասնակիցներին:

Նմանատիպ միջոցառումները երեխաների մոտ դաստիարակում են համարձակություն, գեղագիտական ճաշակ:

Սուսաննա ՍՏԵՓԱՆՅԱՆ Ստեփ. հ. 6 հիմն. դպրոցի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ 2013-2014 ՈՒՍԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՃԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ



2013-2014 ուստարում Շահունյանի շրջանում գործել են 16 հանրակրթական դպրոցներ, որից 11-ը միջնակարգ դպրոցներ են, իսկ 5-ը՝ հիմնական: Նշված դպրոցներում ընդգրկված են եղել 675 աշակերտներ (նախորդ տարվա 647-ի փոխարեն), որից 133-ը՝ Քարվաճառի միջնակարգ դպրոցում (նախորդ տարվա 130-ի փոխարեն), իսկ մնացած 542-ը՝ գյուղական համայնքների դպրոցներում (նախորդ տարվա 517-ի փոխարեն): Այդ թվում՝ 1-ին դասարան են հաճախել 73 աշակերտ (նախորդ տարի՝ նույնպես 73 աշակերտ):

Ուստարվա սկզբում ունեցել ենք 117 դասարան-կոմպլեկտ, որը պահպանվել է նույնությամբ: Տարեվերջին ունեցել ենք 665 աշակերտ, որից 124-ը՝ Քարվաճառի միջնակարգ դպրոցում, 541-ը՝ մնացած համայնքներում: 2014-2015 ուստարում շրջանի դպրոցներ են հաճախում 722 աշակերտներ: Շրջանի դպրոցներում դասավանդել են 244 ուսուցիչներ, այդ թվում՝ տնօրեններ, փոխտնօրեններ: Նրանցից 167-ն ունեն բարձրագույն մասնավարժական, 29-ը՝ բերի բարձրագույն, 36-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթություն, իսկ 12-ը ոչ մասնագետներ են, որոնց մի մասը տարբեր բուհերի ուսանողներ են և շուտով կհամալրեն մասնագետ ուսուցիչների շարքերը: Այդուհանդերձ, շրջանում դեռևս զգացվում է ուսուցիչների կարիք, հատկապես՝ ռուսաց լեզվի, օտար լեզվի, ֆիզիկայի և մաթեմատիկայի:

Չուսուցանվող ժամանակահատվածում և հնարավորինս հարստացվել է շրջանի հանրակրթական դպրոցների ուսումնամեթոդական բազան, կրթօջախները համալրվել են դպրոցական գույքով, համակարգիչներով և տպիչ սարքերով: ԿԳ նախարարությունից ստացել է շրջանի դպրոցները ենթակառուցվածքային առաքել տարբեր դասարանների դասագրքեր, առարկայական պատասխաններ, մեթոդական ուղեցույցներ և այլն:

Բոլոր դպրոցներն ապահովվել են անհրաժեշտ քանակի վառելիքով: Մի քանի դպրոցներում առկա են եղել հնամաշ վառարաններ, որոնք փոխարինել ենք նորերով: Ընդ որում, Նոր Վերինչենի և Եղեգնուտի միջնակարգ դպրոցների ջեռուցումն իրականացվել է մեր կողմից կաթսայատների միջոցով, իսկ Քարվաճառի միջնակարգ դպրոցի ջեռուցումն իրականացրել է «Սան-Սիթի» ՍՊԸ-ն:

Շնորհավորանք ԴԱՅՏԱՌ ՀՈԳՎ, ԱՄՆԱՆՈՐԴ ԵՎԻՐՈՒՄՈՎ



Երջանիկ է այն մարդը, ում աշխատանքը զմայլակապես է հատկապես, երբ այդ աշխատանքը նվիրվում է երեխաների կրթությանն ու դաստիարակությանը: Նման երջանիկներից է Քարվաճառի Վ. Սարոյանի անվան միջնակարգ դպրոցի դասվար Աննա Աբրահամյանը:

ԼՂՀ Շահունյանի շրջանի Քարվաճառի Վ. Սարոյանի անվան դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԱՄՆ ԻՆՉԻՅ ԱՌԱՅ՝ ՄԱՐԴ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻ



Դարեր ի վեր այս հասարակության կյանքում ուսուցիչն ունեցել է իր ուրույն ու արժանապատիվ տեղը: Նա գնահատվել է մեծ գնահատման և սերունդների կրթող ու դաստիարակող, նրանց հոգում լավի ու բարու սերունդն էր սերտնդող և, ի վերջո, երկրի ապագա մարդ-քաղաքացուն ձևավորող:

ՎԵՐՋԻՆ ԷՋ

Խոսք հիշատակի

«ԿԱՌԱՋՆՈՐԴԿԵՆ ԶԵՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՎ»



Միքայել Արտեմի Պետրոսյանը ծնվել է 1932թ. հունվարի 30-ին Ասկերանի շրջանի Ջրաղացներ գյուղում, հասարակ գյուղացու ընտանիքում: Ծնողները համեստ և աշխատասեր մարդիկ էին և ունեին հինգ երեխա: Միջնակարգ կրթությունը ստացել է Ավետարանոցի դպրոցում:

1949թ. ավարտելով դպրոցը՝ ընդունվել է Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտը, որն էլ ավարտել է 1951թ.: Նույն թվականին աշխատանքի է անցել Ակնաղբյուրի ութամյա դպրոցում: Մեկ տարի աշխատելուց հետո, 1952թ. գորակոչվել է խորհրդային բանակի զինված ուժերի շարքերը և ծառայել մինչև 1954թ.: Վերադառնալով հայրենի գյուղ՝ 1955թ. աշխատել է Ավետարանոցի միջնակարգ դպրոցում՝ որպես ավագ պիոներ-ջոկատավար: Ծուռով նա տեղափոխվում է Ակնաղբյուրի ութամյա դպրոց և աշխատում որպես քի-

միայի և կենսաբանության ուսուցիչ: Աշխատանքին զուգընթաց 1956-61թթ. հեռակա կարգով սովորել է Հայաստանի մանկավարժական ինստիտուտի «Քիմիոլոգիա» բաժնում: Աշխատանքի ընթացքում ցուցաբերելով մեծ կազմակերպչական ծիրը և մանկավարժական հմտություններ՝ նա արժանացավ ղեկավարության և կոլեկտիվի խրախուսանքներին և նշանակվեց դպրոցի ուսնասվար: Այդ տարիներին դպրոցի տնօրենն էր Նիկոլայ Մանուչարյանը: Միքայել Պետրոսյանը լավ էր գիտակցում ուսման գործի կարևորությունը և ուսնասվարի իր պարտականությունները կատարում էր պատասխանատվության բարձր զգացումով: Նա խստապահանջ էր, հաստատական և ճշտապահ՝ իր և բոլոր ուսուցիչների նկատմամբ:

1971-72 ուստարում Մ.Պետրոսյանին նշանակեցին դպրոցի տնօրենի պաշտոնում: Այդ տարիներին դպրոցի շենքը հին էր և ոչ հարմարավետ: Նորանշանակ տնօրենի համար առաջնահերթ խնդիր էր դպրոցական նոր շենքի կառուցումը և ամենակարևորը՝ ուսման որակի բարձրացումը: Նրա գլխավորությամբ, լարելով ուժերը, դպրոցի ուսուցչական կոլեկտիվը, կարճ ժամանակամիջոցում հասավ լուրջ հաջողությունների:

1981թ. կառուցվեց դպրոցի նոր շենքը:

Երբ Ավետարանոցի միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ տնօրենների արտագնա խորհր-

դակցություն, միտի մասնակիցները այցելեցին Ակնաղբյուրի միջնակարգ դպրոց և մեծ գոհունակություն հայտնեցին դպրոցում ուսման որակի և շենքային պայմանների նկատմամբ:

Մ.Պետրոսյանը, որպես ղեկավար, գործունյա, նպատակասլաց և մեծահոգի էր: Նա լավ խորհրդատու էր, ազնիվ և համբերատար: Որպես քիմիայի և կենսաբանության ուսուցիչ՝ նա անփոխարինելի էր: Դասապրոցեսը անց էր կացնում հետաքրքիր և իր փորձերով երեխաներին օգնում էր ներթափանցել քիմիայի գարնամահրաշ աշխարհը: Բարձր են գնահատվում նրա մասնագիտական գիտելիքները, և նա նշանակվում է ենթաշրջանի դպրոցների քիմիա առարկայի տեսուչ: Միշտ ուշադիր էր երիտասարդ, սկսնակ ուսուցիչների նկատմամբ, օգնում էր իր բարի խորհուրդներով: Նրա սամերը տարբեր օլիմպիադաներում գրավում էին առաջնակարգ տեղեր՝ բարձր պահելով դպրոցի վարկանիշը: Ուսումնադաստիարակչական աշխատանքների բարձր մակարդակի համար Մ.Պետրոսյանը արժանացել է կառավարության խրախուսանքների և ստացել բազմաթիվ գովասանագրեր:

Մ.Պետրոսյանը ընտանիքի հոգատար հայր էր: Ամուսնացել և ամուր ընտանիք է կազմել տիկին էֆերինայի հետ, մեծացրել և դաստիարակել են չորս հիանալի դուստրեր՝ տալով նրանց բարձրագույն կրթություն: Այժմ աղջիկներից յուրաքանչյուրն աշխատում է իր

մասնագիտությամբ: Լինելով լավ մանկավարժ՝ նա սիրում էր նաև աշխատել հողի հետ, այգի հիմնել, ծառեր պատվաստել: Ակնաղբյուրի հին և նոր դպրոցների շրջակայքում, նրա անմիջական աջակցությամբ պտղատու այգիներ են գցվել:

1992թ. շուրջ քառասուն տարի Ակնաղբյուրի միջնակարգ դպրոցում աշխատելուց հետո նա տեղափոխվում է հայրենի Ջրաղացներ գյուղ, որտեղ այդ տարի բացվել էր ութամյա դպրոց և նշանակվում է դպրոցի տնօրեն:

1997թ. իր կամքով հրաժարվեց տնօրենի պաշտոնից, բանի որ արդեն թռչակառու էր՝ իր տեղը զիջելով երիտասարդ կարգերին: Սակայն դպրոցում աշխատել է որպես ուսուցիչ մինչև 2007թ.: Նա առույգ էր և եռանդուն, ուներ պատասխանատվության զգացում, չնայած իր տարիքին, մեծ ուրախությամբ օգնում և խորհուրդներ էր տալիս ուսուցչական կոլեկտիվի անդամներին: Մենք մեծ հաճույքով ենք աշխատել նրա հետ և ընդօրինակել մարդկային շատ բարձրորակ հատկանիշներ:

Ընկեր Պետրոսյանը սիրում էր կրկնել՝ մարդ պիտի սիրի ֆիզիկական աշխատանքը, լինի աշխատասեր, լինի մտավոր զարգացած և լինի մարդ՝ բառիս բուն իմաստով: Նրա օգնությամբ պտղատու այգի գցեցինք մեկ Ջրաղացների դպրոցի հողամասում: Յիշում են այն օրը, երբ տնկիներ բերեցինք շրջանից և սկսեցինք այգի գցել: Մանկան պես

ուրախ էր ընկեր Պետրոսյանը, քանի որ իրականացավ նրա նպատակներից և մեկը: Մեծ ջանասիրությամբ, աշակերտների օգնությամբ խնամում էր ծառերը:

Ծնորհակալություն Ձեզ՝ Չեր նպատակասլացության և օգնության համար: Այնքան ամուր էր կապված հայրենի հողին, որ երբեք չէր մտածում թողնել գյուղը: Սեփական օրինակով հորդորում էր գյուղի երիտասարդներին՝ ապրել և շենացնել հայրենի գյուղը և երբեք չլքել հայրենիքը:

Ընկ.Պետրոսյանը հոգով երիտասարդ էր, միտքը միշտ պայծառ, լավատես էր և սիրում էր կատակել, անչափ շատ էր գրքեր կարդում: Հանրագիտարանները՝ նրա անբաժան ընկերներն էին:

Գիտակ, բանիմաց ուսուցիչներին մեր երախտագիտությունը պետք է հայտնենք և գլուխ խոնարհենք նրանց վաստակի առաջ:

2014թ. նոյեմբերի 8-ին Մ.Պետրոսյանը կնքեց իր մահկանացուն:

Ինչքան էլ գովեստի, դրվատանքի խոսքեր ասենք նրա մասին, էլի քիչ կլինեն:

Նա կամա մեր հիշողություններում, իսկ ում հիշում են, երբեք չի մահանում:

Մենք կառաջնորդվենք Չեր տված խորհուրդներով և կդաստիարակենք սերունդներին Չեր անձնական օրինակով:

Լիանա ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ջրաղացների դպրոցի
պետրեն

ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ ԵՆ ՄՐՅՈՒՅԹՆԵՐ ԼՂ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՎ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ԲԱՐԱՔԻ ՆԵՐՔՈՆՆՅԱԼ ԳՊՐՈՋՆԵՐԻ ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԻ (ԴԱՍՏԻԱՐԱԿԻ) ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՍԱՐ

Ասկերանի շրջան

- 1. Այգեստանի մ/դ – ֆիզկուլտուրա՝ 23 ժամ

Մարտակերտի շրջան

- 1. Կարմիրավանի հ/դ – քիմիա, կենսաբանություն՝ 10 ժամ
- 2. Կուսապատի մ/դ – քիմիա՝ 6 ժամ

ք. Ստեփանակերտ

- 1. Ստեփանակերտի հ.1 հ/դ – դաստիարակ՝ 1 դրույք

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև նոյեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում:

Մրցույթները տեղի կունենան ղեկավարների 1-ից 5-ը ընկած ժամանակահատվածում:

Հաղործի շրջան

- 1. Ակնաղբյուրի մ/դ - աշխարհագրություն՝ 8 ժամ, ինֆորմատիկա՝ 6 ժամ
- 2. Առաջամուղի մ/դ - աշխարհագրություն՝ 10 ժամ, դասվար՝ 20 ժամ
- 3. Առաքելի մ/դ - զինղեկ՝ 1 հաստիք, քիմիա՝ 8 ժամ
- 4. Քուրաթաղի հ/դ - քիմիա՝ 10 ժամ
- 5. Արևշատի հ/դ - ֆիզիկա՝ 10 ժամ, ֆիզկուլտուրա՝ 18 ժամ
- 6. Խանձաձորի հ/դ - աշխարհագրություն՝ 7 ժամ, քիմիա՝ 7 ժամ, կենսաբանություն՝ 8 ժամ, ռուսաց լեզու՝ 17 ժամ
- 7. Բանաձորի հ/դ – քիմիա, կենսաբանություն՝ 11 ժամ
- 8. Խժաբերդի հ/դ - պատմություն՝ 16 ժամ
- 9. Ուխտաձորի մ/դ - ֆիզիկա՝ 7 ժամ, մաթեմատիկա՝ 14 ժամ, ինֆորմատիկա՝ 6 ժամ

Շուշիի շրջան

- 1. Եղծահողի մ/դ – պատմություն՝ 8 ժամ
- 2. Մեծշենի մ/դ – քիմիա՝ 6 ժամ, կենսաբանություն՝ 6 ժամ
- 3. Գինշենի հ/դ – օտար լեզու (անգլերեն)՝ 6 ժամ,
- 4. Լիսագորի մ/դ – օտար լեզու (անգլերեն)՝ 10 ժամ, քիմիա՝ 6 ժամ

Շահումյանի շրջան

- 1. Քարվաճառի մ/դ – շախմատ՝ 6 ժամ
- 2. Ակնաբերդի մ/դ - հասարակագիտություն՝ 8 ժամ, ռուսաց լեզու՝ 6 ժամ
- 3. Նոր Բրաջուրի մ/դ – ՆՁՊ՝ 1 հաստիք, դասվար՝ 21 ժամ, ֆիզիկա՝ 10 ժամ
- 4. Նոր Գետաշենի մ/դ – քիմիա, կենսաբանություն՝ 14 ժամ, պատմություն՝ 12 ժամ, օտար լեզու(անգլերեն)՝ 12 ժամ
- 5. Դաղիվանքի մ/դ - օտար լեզու(անգլերեն)՝ 10 ժամ, քիմիա, կենսաբանություն՝ 12 ժամ, ֆիզկուլտուրա՝ 12 ժամ
- 6. Եղեգնուտի մ/դ - հայոց եկեղեցու պատմություն՝ 6 ժամ
- 7. Ջուարի մ/դ - ռուսաց լեզու՝ 10 ժամ
- 8. Նոր Էրեբեցի մ/դ – ՆՁՊ՝ 1 հաստիք, աշխարհագրություն՝ 6 ժամ, դասվար՝ 20 ժամ, քիմիա, կենսաբանություն՝ 14 ժամ, հայոց լեզու և գրականություն՝ 10 ժամ, ֆիզկուլտուրա՝ 15 ժամ
- 9. Նոր Խարխափուտի հ/դ - ՆՁՊ՝ 0,5 հաստիք, դասվար՝ 20 ժամ
- 10. Ծարի հ/դ – մաթեմատիկա՝ 7 ժամ, ֆիզիկա՝ 7 ժամ, աշխարհագրություն՝ 8 ժամ, պատմություն՝ 8 ժամ, հայոց լեզու և գրականություն՝ 11 ժամ
- 11. Հավաթաղի հ/դ - օտար լեզու(անգլերեն)՝ 8 ժամ, կենսաբանություն, քիմիա՝ 8 ժամ
- 12. Նոր Դարաչինարի մ/դ – ՆՁՊ՝ 1 հաստիք, ֆիզիկա՝ 8 ժամ, պատմություն՝ 6 ժամ, հայոց լեզու և գրականություն՝ 24 ժամ, մաթեմատիկա՝ 16 ժամ, դասվար՝ 22 ժամ, ռուսաց լեզու՝ 16 ժամ
- 13. Նոր Մանաչիղի հ/դ – ֆիզիկա՝ 14 ժամ, ինֆորմատիկա՝ 14 ժամ, աշխարհագրություն՝ 6 ժամ, պատմություն՝ 20 ժամ, օտար լեզու(անգլերեն)՝ 12 ժամ, ռուսաց լեզու՝ 15 ժամ
- 14. Չարեքտարի մ/դ – ֆիզիկա՝ 10 ժամ, դասվար՝ 22 ժամ, օտար լեզու(անգլերեն)՝ 14 ժամ, ֆիզկուլտուրա՝ 15 ժամ, դասվար՝ 20 ժամ, շախմատ՝ 6 ժամ
- 15. Նոր Վերինշենի մ/դ – ինֆորմատիկա՝ 6 ժամ, դաստիարակ՝ 1 հաստիք:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև ղեկավարների 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

րից՝ համապատասխան դպրոցներում:

Մրցույթները տեղի կունենան ղեկավարների 8-ից 13-ը ընկած ժամանակահատվածում:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԼԴՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 2013թ. թիվ 25-26-ում, առարկայական հարցաշարերը՝ 2014թ. թիվ 23-24-ում և տեղադրված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայքէջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- 1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ մշտելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1):
 - 2. Փաստաթուղթ (դիմում) «Հանրակրթության մասին» ԼԴՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ
 - 3. Անձնագրի պատճենը
 - 4. Ինքնակենսագրություն (Ձև 4)
 - 5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)
 - 6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի
 - 7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք
 - 8. ԼԴՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
- Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
- Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոցներ:

ԼՈՒՍԱՐԱՐ ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ	Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ	Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorceter@mail.ru : www.lusarar.info	Մեքերունների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ զրպարություն վարելու պարտավորություն չի ստանձնում:	Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլոս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 2 մասով: Ստորագրված է տպագրության՝ 24.11.2014թ.:
---	---------------------------------------	---	--	---

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: